ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2024 թվականի N 678-Ա

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-112-0077-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ 0.13868 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104 Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքացի Հայկ Ավետիքի Մամաջանյանի դիմումը, անձնագրերի պատճենները, Օձուն բնակավայրիվարչական ղեկավարի կողմից տրված 29.02.2024թ. հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15.05.1991թ. N 1 որոշման քաղվածքը, 05.04.2024թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Սարգիս Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը՝

որոշում եմ.

1.Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Ալավերդի համայնքի Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-112-0077-0001 ծածկագրով 0.13868 հա մակերեսով հողամասի և հողամասում առկա բնակելի տանը և օժանդակ շինություններին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, 7 փոստային հասցեն:

2.Վերականգնել Հայկ Ավետիքի Մամաջանյանին, Անուշ Միշայի Վանյանին, Լուսինե Հայկի Մամաջանյանին, Ավետիք Հայկի Մամաջանյանին, Ռուստամ Հայկի Մամաջանյանին պատկանող, համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, 7 հասցեում գտնվող, բնակելի տան ու օժանդակ շինությունների՝ ավտոտնակի, խորդանոցի, անասնաշենքի, ծածկի, 0.13868 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

3.Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1989 թվականին կառուցված բնակելի տունը և օժանդակ շինությունները՝ ավտոտնակը, խորդանոցը, անասնաշենքը, ծածկը, Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Հայկ Ավետիքի Մամաջանյանի (ծնված՝ 22.07.1953թ.), Անուշ Միշայի Վանյան (ծնված՝ 03.06.1958թ), Լուսինե Հայկի Մամաջանյանի (ծնված՝ 14.02.1977թ), Ավետիք Հայկի Մամաջանյանի (ծնված՝ 23.11.1978թ), Ռուստամ Հայկի Մամաջանյանի (ծնված՝ 31.05.1981թ) ընդհանուր բաժնային սեփականությունը:

4.Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. ապրիլի 15
ք. Ալավերդի